ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

14.07.2014 11:50

Հարգելի փաստաբաններ,
2013թ. դեկտեմբեր ամսից ՀՀ Փաստաբանների պալատը անդամակցում է Փաստաբանների Միջազգային Միությանը (Union Internationale des Avocats): Միությունը հանդիսանում է փաստաբաններին միավորող առաջին միջազգային կառույցը (ստեղծվել է 1927թ.) և միավորում է շուրջ 110 երկրներ ներկայացնող մոտ 2000 անհատ փաստաբաններ և 200 փաստաբանական միություններ և ասոցիացիաներ:
Սույն թվականի հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 2-ը Իտալիայի Հանրապետության Ֆլորենցիա քաղաքում տեղի է ունենալու Փաստաբանների Միջազգային Միության 58-րդ տարեկան համաժողովը հետևյալ թեմաների շուրջ՝
• կրեատիվության պաշտպանությունը.
• արվեստի իրավունք (Art Law).
• նորաձևության իրավունք.
• դիզայնի իրավունք.
ՀՀ փաստաբանների պալատը ուրախ է տեղեկացնելու որ բոլոր ցանկացողները կարող են մասնակցել համաժողովին նախապես՝ ***մինչև սույն թվականի սեպտեմբերի 30-ը գրացնվելու դեպքում***:
Մասնակցելու վերաբերյալ անհրաժեշտ բոլոր տեղեկությունները կարող եք ստանալ այցելելով www.uianet.org կայք:

Հ.Գ. Տեղեկացնում ենք նաև, որ բոլոր ծախսերը հոգալու է անձամբ փաստաբանը:

ՀՀ փաստաբանների պալատի
մամուլի ծառայություն

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })